11.qxd 30/05/2025 17:21 Page 1

ԳԵՂԱՄԱ ՇՐՋԱՆ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 30 մայիսի 2025թ. թիվ 11 (615)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՀՆՉԵԼ Է ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ

Մայիսի 23-ին Գեղարքունիքի մարզային ենթակայության 115 եւ ԿԳՄՍ նախարարության ենթակայության 8 հանրակրթական դպրոցներից 5-օրյա աշխատանքային շաբաթ ունեցող 113 դպրոցներում հնչել է 2024-2025 ուսումնական տարվա Վերջին զանգը, իսկ 6-օրյա աշխատանքային շաբաթ ունեցող դպրոցներում վերջին զանգին նվիրված միջոցառումները տեղի են ունեցել մայիսի 24-ին:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, Գեղարքունիքի մարզում 2024-2025 ուսումնական տարվա ավարտին իրենց կրթօջախներին հրաժեշտ են տալիս 1473 12-րդ դասարանների շրջանավարտներ, որոնցից 1083-ը՝ մարզային, իսկ 390-ը՝ ԿԳՄՍՆ ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողներ են:

Մարզում սովորող 2678 9-րդ դասարանցիներից 2652-ը ավարտում են մարզային ենթակայության, իսկ 26-ը՝ ԿԳՄՍՆ ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունները:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը այս ուսումնական տարին հայտարարել է մշակութային կրթության տարի, որի շրջանակում Գեղարքունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում Վերջին դասին նվիրված միջոցառումների ծրագրերը հիմնականում մշակվել եւ ներկայացվում են նախագծային աշխատանքների տեսքով՝ համադրելով կրթությունն ու մշակույթը:

Շրջանավարտների կողմից միջոցառումները պատշաճ անցկացնելու, ավելորդ խնդիրներից եւ միջադեպերից զերծ մնալու նպատակով այս օրերին դպրոցներում, դպրոցամերձ տարածքներում եւ հանրային այլ վայրերում ուժեղացված ծառայություն են իրականացնում ՀՀ ՆԳՆ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության աշխատակիցները եւ պարեկային ծառայողները:

Մայիսի 23-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը վերջին զանգի կապակցությամբ այցելել է Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց, իր շնորհավորանքի խոսքն ու բարեմաղթանքներն ուղղել շրջանավարտներին ու նրանց ծնողներին, դպրոցի տնօրինությանը եւ ուսուցչական անձնակազմին:

Վերջին զանգի առիթով մարզի շրջանավարտներին նորհավորական ուղերձ է հղել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, որում ասված է. «Սիրելի՜ շրջանավարտներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Վերջին զանգի կապակցությամբ՝ մի իրադարձություն, որն իր մեջ համադրում է կրթական կարեւոր շրջափուլի ավարտն ու կյանքի նոր էջի բացումը:

Դպրոցական տարիները ձեր կյանքում եղել են ձեւավորող եւ ուղղորդող՝ լի գիտելիքի, փորձառության, ընկերության եւ բարոյական արժեհամակարգի ձեւավորման գործընթացներով: Այս օրը ձեզ համար կոչ է շարժվելու առաջ՝ նոր նվաճումների, նոր փորձությունների ու հաջողությունների ընդառաջ:

Դուք կանգնած եք կարեւոր ընտրության ու պատասխանատվության շեմին: Վստահ եմ, որ դպրոցում ստացած գիտելիքը, արժեքներն ու կարողությունները կծառայեն որպես ամուր հիմք՝ ձեր հետագա կրթական եւ մասնագիտական զարգացման ճանապարհին: Ձեր յուրաքանչյուր հաջողություն լինելու է նաեւ ձեր ուսուցիչների, ծնողների եւ ամբողջ կրթական համակարգի հաջողությունը:

Ցանկանում եմ առանձնակի երախտագիտություն հայտնել ուսուցիչներին՝ իրենց նվիրված աշխատանքի, սեր ու համբերություն պահանջող առաքելության համար: Հարգանք եւ շնորհակալություն նաեւ ծնողներին՝ վստահության, խրախուսման եւ անմնացորդ սիրո համար: Ձեր աջակցությունն այս ճանապարհի անբաժան մասն է:

Սիրելի շրջանավարտներ, թող ձեր ընտրած ուղին լինի լուսավոր եւ արդար: Վստահ եմ, որ դուք պատշաճ կերպով կկրեք շրջանավարտի պատիվը եւ ձեր գործունեությամբ կծառայեք մեր պետության շարունակական զարգացմանը:

Շնորհավորում եմ Վերջին զանգի կապակցությամբ եւ մաղթում բազում հաջողություններ ձեր ապագա բոլոր նախաձեռնություններում: Թող յուրաքանչյուր ավարտ լինի նոր ու պայծառ սկիզբ»:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«Հարգելի՜ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ ձեզ մայիսի 28-ի՝ Հայաստանի Առաջին Հանրապետության օրվա կապակցությամբ:

Մայիսի 28-ը մեր պատմության փառավոր էջերից է: Այս օրը՝ 1918 թվականին, ծնվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ ազատության ու ինքնիշխանության համար մեր ժողովրդի անսասան կամքի արդյունքը:

Չնայած իր կարճատեւ գոյությանը՝ Առաջին Հանրապետությունը հիմնեց այն արժեքները, որոնց վրա այսօր կառուցվում է մեր անկախ պետականությունը՝ ժողովրդավարություն եւ ինքնիշխանություն:

Առաջին Հանրապետության հիմնադիրներն իրենց անձնական նվիրվածությամբ եւ հերոսական պայքարով մեզ փոխանցեցին անկախության, համախմբվածության եւ պայքարի ոգին: Նրանց թողած ժառանգությունը շարունակվում է այսօր՝ մեր պետականության ամրապնդման, խաղաղության եւ զարգացման ուղին հարթելով:

Այսօր, ապրելով արդեն անկախ Հանրապետության պայմաններում, մենք պարտավոր ենք արժանապատվորեն շարունակել այդ սրբազան գործը՝ կերտել արդար, ուժեղ ու զարգացած Հայաստան:

Մեր պետության ամրապնդման, անկախության պահպանման եւ ազգային իդեալների իրագործման ճանապարհը անցնում է միասնական կամքի, քաղաքացիական գիտակցության եւ նվիրվածության միջով:

Թո՛ղ մայիսի 28-ը մեզ միավորի ոչ միայն որպես հիշողություն անցյալի մասին, այլ որպես ապագայի կերտման կոչ՝ հիմնված մեր ազգային արժեհամակարգի, համախմբվածության եւ նպատակասլացության վրա:

Շնորհավոր տոնդ, Հայաստա՛ն»:

ԱՐԱՏԵՍԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՈՐՀ ՎԱՆՔԸ

Մեր մեքենան մայրամուտի վառվռուն շողերի ներքո շարունակում է իր ընթացքը Եղեգիսի կիրճով դեպի արեւելք, ասֆալտապատ ճանապարհով: Եղեգիս գյուղից քիչ հեռվում Թաթուլը ցույց է տալիս Հոստուն գյուղատեղի ավերակները, որոնք ավելի ուշադիր զննելու նպատակով կանգառ անելու ժամանակ չունենք: Կանգառ անելու ժամանակ չունենք նաեւ հռչակավոր Հերմոնավանքի մոտով անցնելիս:

-Եղեգիսի կիրճում ամեն քայլափոխի կարող ես դեմ առնել մեկը մյուսից գեղեցիկ ու անկրկնելի պատմաճարտարապետական հուշարձանների,-ասում է Թաթուլը,- ու դրանք այնքան շատ են, որ մարդուն օրեր ու շաբաթներ հարկավոր կլինեն՝ յուրաքանչյուր հուշարձանի մոտ այց կատարելու ու պատկերացում կազմելու համար:

Ավելի առաջ գնալով՝ մենք հայտնվում ենք լեռնաշխարհի ավելի ընդարձակ շառավղում, ուր ավելի բարձր են լսվում լեռներից սրընթաց իջնող ջրերի գոչյունները: Արեւելյան ուղղության ճանապարհը քիչ-քիչ թեքվում է դեպի հյուսիս ու ավարտվում մի բլրի մոտ, որի վրա բարձրանում է Արատեսի վանք ասված հրաշակոթողը՝ կիսավեր վանական համալիրի տեսքով:

Մայրամուտի մարմրող ցոլքերի ներքո Արատեսը մեր աչքերին գծագրվում է վեհափառ տաճարի տեսքով, ճարտարապետական շքեղագույն փայլով, մարդկային մտքի խորաթափանցությամբ ու գեղագիտական անմրցելի ճաշակով: Անհուն կարոտով ու սիրով, հուզմունքով ու որդիաբար ուզում ես փարվել ամեն մի սյան, կամարի, քանդակազարդ քարի, որմերով մեկ տարածվող արձանագրությունների, ուզում ես կարդալ անցած դարերի դասերը, որ հայատառ գրերով դաջված են քարակուռ պատերին, խաչքարերին ու տապանաքարերին, վերծանել ու ըմբռնել տապանաքարերի վրա քանդակված կենցաղային պատկերները, ազգիդ ստեղծագործ, կուռ ու մարտնչող ոգին, որ կարողացել է կենաց-մահու կռիվ տալ թե՛ բնական, թե՛ քաղաքական աղետների դեմ:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

11.qxd 30/05/2025 17:21 Page 2

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 3 ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՂԹՈՂ ԵՆ ՃԱՆԱՉՎԵԼ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղի թիվ 2 միջնակարգ եւ Սեւան համայնքի Հովհաննես Այվազովսկու անվան արվեստի դպրոցի աշակերտները հաղթող են ճանաչվել մանկապատանեկան ստեղծագործական միջազգային մրցույթ-ցուցահանդեսում, որը տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ «Արհեստագործների միություն» մշակութային հիմնադրամի նախաձեռնությամբ: Հայաստանի նկարիչների միությունում տեղի են ունեցել«Խաղաղություն» միջազգային մանկապատանեկան ստեղծագործական մրցույթ-ցուցահանդեսի եզրափակիչ ցուցադրությունն ու հաղթողների պարգեւատրման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառմանը ներկա է եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Մրցույթ-ցուցահանդեսը միավորել է Հայաստանի եւ աշխարհի տարբեր երկրների՝ Եգիպտոսի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ուզբեկստանի, Թուրքիայի, Հունաստանի, Ռուսաստանի, Վրաստանի, Իսպանիայի եւ Ավստրիայի ավելի քան 1500 շնորհալի երեխաների՝ երկու տարիքային խմբերում (մինչեւ 10 եւ 10–15 տարեկան), որոնք իրենց արվեստով փոխանցել են խաղաղության, համերաշխության եւ մարդասիրության կարեւորագույն արժեքները:

Նախարարը շնորհավորել է հաղթողներին՝ հույս հայտնելով, որ ապագայում նոր ցուցադրությունների մասնակցելու հնարավորություն կունենան: Եզրափակիչ ցուցահանդեսին ներկայացվել են միջազգային ժյուրիի կողմից ընտրված 80 լավագույն ստեղծագործություններ:

Մրցույթն անցկացվել է երկու տարիքային խմբերում:

Ավագ խմբում Գրան պրի մրցանակին է արժանացել Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոցի սան Էլեն Աճեմյանը, 1-ին տեղի մրցանակին՝ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի Աղվան Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի նկարչական խմբի սան Անգելինա Նավոյանը: 2-րդ եւ 3-րդ տեղերը գրավել են Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոցի սաներ Ալեն Գունանյանը եւ Հասմիկ Թամազյանը: Կրտսեր խմբում Գրան պրի մրցանակի է արժանացել Գեղագիտության ազգային կենտրոնի սան Վիկտորիա Վարդանյանը, 1-ին տեղի մրցանակի՝ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Հովհաննես Այվազովսկու անվան արվեստի դպրոցի սան Ռիտա Բարսեղյանը: 2-րդ տեղի մրցանակի է արժանացել Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի Ա. Եղիազարյանի անվան դպրոցի նկարչական խմբի սան Արսինե Աբելյանը:

3-րդ տեղը գրավել է Վիեննայի Հ. Շիրազի անվան շաբաթօրյա դպրոցի սան Վանեսսա Սոսյանը:

Միջոցառման ընթացքում ուսուցիչներին եւ կրթական հաստատություններին եւս հանձնվել են մրցանակներ, դիպլոմներ, խրախուսական պատվոգրեր, հատուկ մրցանակներ: Ցուցահանդեսն այցելուների համար բաց է եղել մինչեւ մայիսի 26-ը:

ՎԱՐԴԵՆԻԿԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԹԻՄԸ՝ ՀՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 19-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂ

Վարդենիկի կրթահամալիրի թիմը ճանաչվել է ՀՀ դպրոցականների շախմատի 19-րդ օլիմպիադայի Գեղարքունիքի մարզային փուլի հաղթող:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, ՀՀ դպրոցականների շախմատի 19-րդ օլիմպիադան Գեղարքունիքի մարզում մեկնարկել է 2025 թվականի մարտ ամսից, որի ներդպրոցական փուլին մասնակցել են շուրջ 2500 պատանիներ ու աղջիկներ: Այս փուլում ձեւավորվել են դպրոցների հավաքական թիմերը, որոնք ապրիլի 27-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել են օլիմպիադայի Գավառի, Մարտունու, Սեւանի, Ճամբարակի եւ Վարդենիսի համայնքային փուլերին:

ՀՀ դպրոցականների շախմատի 19-րդ օլիմպիադայի Գեղարքունիքի մարզային փուլի մրցումներն անցկացվել են 2025 թվականի մայիսի 22-ին՝ Գավառի Պ. Ղանդիլյանի անվան N 2 միջնակարգ դպրոցում, որին մասնակցել են համայնքային փուլում հաղթող ճանաչված Գավառի N 4, Ճամբարակի N 1, Վարդենիսի N 2, Սեւանի N 3 հիմնական դպրոցների եւ Վարդենիկի կրթահամալիրի հավաքական թիմերը:

Մրցաշարին մասնակցել են մինչեւ 14 տարեկան դպրոցականները:

Օլիմպիադան անցկացվել է թիմային հաշվարկով, ընդ որում, թիմը բաղկացած է եղել տվյալ դպրոցի 4 աշակերտներից, որոնցից առնվազն 1-ը՝ աղջիկ:

Այն անցկացվել է ՖԻԴԵ-ի արագ շախմատի կանոններով, շրջանաձեւ, որի ընթացքում խաղացողին տրվել է 10 րոպե մինչեւ խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:

Մրցապայքարի արդյունքում հաղթող է ճանաչվելՎարդենիկի կրթահամալիրի հավաքական թիմը (մարզիչ՝ Սամվել Արզումանյան): Երկրոդ տեղը գրավել է Վարդենիսի N 2 հիմնական դպրոցի թիմը (մարզիչ՝ Արմեն Սիմոնյան), իսկ երրորդ տեղը՝ Գավառի N 4 հիմնական դպրոցի թիմը (մարզիչ՝ Արեւ Արզաքանցյան):

Օլիմպիադայի մարզային փուլի մրցումներին մասնակից բոլոր թիմերի շախմատիստներին եւ մարզիչներին «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության» կողմից հանձնվել են հուշանվերներ:

Վարդենիկի կրթահամալիրի հավաքական թիմը Գեղարքունիքի մարզը կներկայացնի Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատի 19-րդ օլիմպիադայի եզրափակիչ փուլում:

ՆՈՐԱՏՈՒՍՈՒՄ ԳԱՅԼԵՐԸ 75 ԳԼՈՒԽ ՈՉԽԱՐ ՈՒ ԳԱՌ ԵՆ ՀՈՇՈՏԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս գյուղում մայիսի 29-ի գիշերը գայլերը 75 գլուխ ոչխար ու գառ են հոշոտել:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, հոշոտված անասուններից 25-ը գառներ են, 50-ը մաքիներ:

Տեղում վնասը գույքագրել են ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության, Գեղարքունիքի մարզպետի եւ Գավառի համայնքապետարանի աշխատակազմերի կողմից ստեղծված հանձնաժողովները: Ըստ կազմված ակտի՝ հոշոտված ոչխարները պատկանել են Նորատուս գյուղի 9 տնտեսությունների, որոնցից 50-ը՝ հովիվ

Արայիկ Հայրապետյանին, մնացած 25-ը՝ 8 այլ տնտեսությունների:

-Հովիվ Արայիկ Հայրապետյանին պատկանող փարախում ու գոմում եղել են 217 գլուխ ոչխար, որոնց մի մասը մասնավոր տնտեսություններից վարձով պահելու նպատակով հավաքագրել է Արայիկ Հայրապետյանը: Գայլերը գոմ են թափանցել բաց պատուհանից, վնաս են հասցրել նաեւ բացօթյա փարախում գտնվող ոչխարներին,-ներկայացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից:

Տնտեսություններին հասցված վնասը գնահատվել է 3 միլիոն 500 հազար դրամ:

«Գեղամա աշխարհ»

«ՔՈ ԱՐՎԵՍՏԸ ԴՊՐՈՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը եւ «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ը համատեղ անցկացնում են «Քո արվեստը դպրոցում» հանրապետական կրթամշակութային ծրագիրը, որի շրջանակում իրականացվել են Հայաստանի անվանի մշակութային գործիչների, արվեստագետների կյանքի ու գործունեության ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, «Քո արվեստը դպրոցում» կրթամշակութային ծրագրի շրջանակներում այս տարի առաջին հանդիպում-դասախոսությունը Գեղարքունիքի մարզում տեղի է ունեցել մայիսի 20-ին՝ Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում, որտեղ հանդիպմանը մասնակցել են Գավառի տարածաշրջանի բոլոր դպրոցների բարձր դասարանների աշակերտները: Նրանք հյուրընկալել են թատերարվեստի ներկայացուցիչ Փառանձեմ Սահակյանին:

Մարզում հաջորդ հանդիպումը կայացել է մայիսի 21-ին: Սեւանի տարածաշրջանի դպրոցականները Սեւանի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցում հանդիպում են ունեցել կինոարվեստի ներկայացուցիչ Արամ Դովլաթյանի հետ:

Վերջին հանդիպում-դասախոսությունը Գեղարքունիքի մարզում տեղի է ունեցել մայիսի 22-ին, որի ընթացքում Մարտունու տարածաշրջանի դպրոցականները Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում հանդիպում են ունեցել պարարվեստի ներկայացուցիչ Գոռ Սարգսյանի հետ:

Հանդիպում-դասախոսությունները ունեցել են հատուկ ընտրված խորագրային թեմաներ, որոնց օգնությամբ զրույցների ընթացքում բացահայտվել են արվեստի պատմությանը, նպատակներին ու խնդիրներին առնչվող ուշագրավ փաստեր ու տեղեկություններ:

Թեմաների ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով աշակերտների տարիքային խմբերի հետաքրքրություններն ու առանձնահատկությունները:

Հանդիպումներն ուղեկցվել են շնորհանդեսներով, երաժշտական կատարումներով, ստեղծագործությունների հատվածային դիտումներով, գրական ընթերցումներով:

Հանդիպումներն ավարտվել են հարցուպատասխաններով:

«Գեղամա աշխարհ»

11.qxd 30/05/2025 17:21 Page 3

ԳԱՆՁԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՍԱՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Գանձակի մշակույթի տան նկարչության բաժնի սան Դիանա Հովհաննիսյանը Կիպրոսում մասնակցել է Նիկոսիայի Կրթության, գիտության եւ մշակույթի կենտրոնում տեղի ունեցած «Gold Aphrodite» 2025 արվեստների միջազգային փառատոնին եւ արժանացել «Գրան-Պրի» մրցանակի՝ ստանալով Դուբայում կայանալիք միջազգային մրցույթի հրավեր:

Մշակույթի տան նկարչության բաժնի սան Լալա Ավետիսյանի «Շառլ Ազնավուր» աշխատանքն էլ Հ. Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնում ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված «Շառլ Ազնավուր- 100», «Սերգեյ Փարաջանով - 100» մրցույթում 104 աշխատանքների հետ ճանաչվել է լավագույնը: Այդ աշխատանքները մեկ ամիս ցուցադրվել են Գեղագիտության ազգային կենտրոնում:

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գանձակ գյուղի մշակույթի տան սաները մրցանակներ են նվաճել միջազգային ու հանրապետական ստուգատեսներում:

Ալվարդ Մանուկյան

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն մեկ շաբաթ է, ինչ մեկնարկել եւ ընթանում են մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Արծվանիստի մանկապարտեզի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 216 միլիոն դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է շենքի հիմքերի ուժեղացում ու առաջին հարկի առաստաղի ամրացում, 2 կցակառույց, ներքին ու արտաքին հարդարում, սանհանգույցի կառուցում, նոր գույքի ձեռքբերում, բակային հատվածի բարեկարգում, այլ աշխատանքներ:

Շինարարությունը նախատեսված է ավարտել 2026 թվականի օգոստոսին:

Շինարարությունն իրականացնում է «Կոթաշին» ՍՊԸ-ն:

Արծվանիստի մանկապարտեզն իր գործունեությունը դադարեցրել էր 2016 թվականից՝ շենքային անբավարար պայմանների պատճառով:

«Գեղամա աշխարհ»

ԾՈՎԱՍԱՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են 3-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծովասարի 3-րդ փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 66 միլիոն 982 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Ծովասարի 3-րդ փողոցի ասֆալտապատում՝ 700 մետր երկարությամբ եւ 3500 քառակուսի մետր մակերեսով, ջրահեռացման ու ոռոգման առուների տեղադրմամբ, առանձին տեղերում՝ հենապատերի կառուցմամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի մայիսի 14-ից եւ կավարտվեն այս տարվա ընթացքում: Այս պահին ընթանում են հենապատերի կառուցման աշխատանքները: Շինարարությունն իրականացնում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

ԵՐԱՆՈՍՈՒՄ ՍԿՍՎԵԼ ԵՆ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են ներհամայնքային փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Երանոսի ներհամայնքային փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 116 միլիոն 652 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է 1-ին, 21, 5, 9, 22-րդ փողոցների առանձին հատվածների ասֆալտապատում՝ 1920 մետր ընդհանուր երկարությամբ եւ 9240 քառակուսի մետր մակերեսով: Կառուցվելու է նաեւ ոռոգման եւ ջրահեռացման համակարգ, հենապատ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի մայիսի 10-ից եւ կավարտվեն այս տարվա ընթացքում:

Շինարարությունն իրականացնում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՔ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Արցախի, Պարույր Սեւակի եւ Թումանյան փողոցներում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Մարտունու Արցախի, Պարույր Սեւակի եւ Թումանյան փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 79 միլիոն 963 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է Արցախի, Պարույր Սեւակի եւ Թումանյան փողոցների ասֆալտապատում՝ 1924 մետր ընդհանուր երկարությամբ եւ 13 հազար 468 քառակուսի մետր մակերեսով:

Այս պահի դրությամբ նշված փողոցներում իրականացվել են հողային աշխատանքներ: Առաջիկա շաբաթների ընթացքում կտեղադրվեն նաեւ ավազակոպճային հիմքը եւ ասֆալբետոնյա շերտը:

Այս փողոցների մայթերը եւ ջրահեռացման համակարգերը կառուցվել են նախորդ տարիներին իրականացված սուբվենցիոն ծրագրերով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

ԳԱՎԱՌԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՐԵՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Կարեյան փողոցի հիմնանորոգման աշխատանքները, որոնք սկսվել էին 2024 թվականի հոկտեմբերից, ամբողջությամբ ավարտվել են մայիսի երկրորդ կեսի դրությամբ:

Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Կարեյան փողոցը հիմնանորոգվել է ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 88 միլիոն 970 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Կարեյան փողոցը հիմնանորոգվել է 603 գծամետր երկարությամբ եւ 3600 քառակուսի մետր մակերեսով, մայթի կառուցմամբ, ջրահեռացման համակարգի տեղադրմամբ:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Գավառի ճշշ» ԲԲԸ-ն:

Կարեյան փողոցը, թաղամասի բնակիչների վկայությամբ, 1984 թվականից ի վեր հիմնանորոգվում է առաջին անգամ:

Ալվարդ Մանուկյան

11.qxd 30/05/2025 17:21 Page 4

ԱՐԱՏԵՍԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՈՐՀ ՎԱՆՔԸ

/սկիզբը էջ 1-ում/

Այո՛, Եղեգիսի կիրճը եղել է ու կա՝ որպես հայության հազարամյակների բնօրրան, սակայն այստեղ տեւական ու դաժան ժամանակների ընթացքում թափանցել են պարսիկներ, արաբներ, կարակոյունլու եւ աղկոյունլու թուրքմենական ցեղեր, մոնղոլներ, վաչկատուն այլ ցեղեր: Եղել է եւ անողոք մի ժամանակ, երբ մեր հողի ու արյան ոխերիմ թշնամիներին հաջողվել է հայությանն ամբողջովին դուրս մղել Եղեգիսի կիրճից, այս սրբազան հայրենիքից, սակայն Արատեսն ու մյուս հրաշակոթողները, թեկուզ կիսավեր, կարողացել են դիմանալ եւ այդ սոսկալի փորձությանը:

Արատեսի վանական համալիրը փայլում է թե՛ դրսից, թե՛ ներսից, ու այս շքեղությունը խոսում է այն մասին, թե մեր հեռավոր նախնիներն ինչ նվիրումով, հավատով ու արվեստի վերջին ճիչով են կառուցել Աստծո տունը, թե ինչպես են արվեստին մաքուր հայկական դիմագիծ տվել: Իսկ պատերով մեկ իջնող արձանագիր տողերը անջնջելի, անխորտակ, քարակոփ գրադարաններ են, որոնք բաց գրքի պես բաց երկնքի տակ պատմում են համայն աշխարհին, թե ովքեր են եղել այս երկրի իսկական տերերը, իշխաններն ու հոգեւորականները, թե որ ժողովուրդն է ձեւ ու իմաստ տվել ապառաժներին, կարծր քարերին, թե ինչ լեզվով են խոսում քարեղեն այս վկայագրերը:

Մեր բազմադարյան թշնամիները թե՛ երեկ, թե՛ այսօր ջանք չեն խնայել ու չեն խնայում՝ հայոց այս սրբազան հայրենիքն իրենցով անելու, իրենց մարդասպան ու մշակութասպան ոճրագործություններն արդարացնելու համար: Այդ ոչինչ, որ իրենց տխրահռչակ գոյության հարյուրամյակների ընթացքում նրանք այս հողի վրա որեւէ կոթող չեն թողել: Փոխարենը զբաղված են եղել միայն հայկականության հետքերը ջնջելով, որը, բարեբախտաբար, մինչեւ վերջ ավարտի հասցնել չեն կարողացել:

Արատեսի վանքի մասին ընդարձակ ուսումնասիրություն է թողել ականավոր հայագետ, վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը իր «Դիվան հայ վիմագրության» կոթողային աշխատության մեջ:

«Հնում Արատեսը եղել է վանքին կից մի փոքրիկ գյուղ, ընդամենը 6 հարկի չափով: Վանքը բաղկացած է իրար կից 4 մեծ եւ 5 փոքր շենքերից, դրանցից 8-ը կանգնած են նույն ուղղության վրա՝ հյուսիսից հարավ, իսկ մեկը կից է դրանց արեւմուտքից:

Վանքի եկեղեցիներն արձանագրությունների մեջ կոչված են Սուրբ Սիոն, Սուրբ Կարապետ, Սուրբ Աստվածածին: Շինարարական արձանագրությունների բացակայության պատճառով հնարավոր չէ որոշել շենքերի կառուցման ճիշտ թվականը: Վանքի շինությունը սկսվել է հյուսիսից: Կենտրոնում մի բաղածածկ եկեղեցի է, որին հյուսիսից կցվել են երկու եւ հարավից՝ երեք մատուռներ: Շենքերի առաջին խումբը կառուցվել է հավանաբար 7-րդ դարում ու կոչվել Սուրբ Սիոն: Երկրորդ հերթին պետք է շինված լինի ամենահարավային գմբեթավոր եկեղեցին, հավանաբար 10-րդ դարում: Վերջինիս հյուսիսային պատն իր արեւելյան ծայրով միանալով 3 կից մատուռների պատին, նրանց առջև ստացվում է բաց տարածություն, 3 կողմից եզերված շինություններով: Այդ անպատշաճությունը վերացնելու նպատակով նախորդ շենքերին կցել են որմնամույթեր եւ միայն արեւմտյան նոր պատ շինելով՝ երեք մատուռների առջեւ եղած բաց տարածությունը վերածել են քառակուսի հատակագծով գավթի: Հավանական ենք համարում, որ այդ եկեղեցին կոչվել է Սուրբ Կարապետ, իսկ գմբեթավորը՝ Սուրբ Աստվածածին...

Բարեբախտաբար, գավթի շինության ոչ միայն ստույգ թվականն է հայտնի, այլ նաեւ վարդապետ-ճարտարապետի անունը: Քաջբերունին իր ժամանակին շենքի վերին մասից ընկած կամարի մի բեկորի վրա կարդացել է Սիրանես անունը պարունակող մի հիշատակագրություն, որն այժմ կորած է: Մենք պարզել ենք, որ Սիրանեսը Տարսայիճ Օրբելյանի օրոք նրա «դրան» ճարտարապետն է եղել, նրա պատվերով կառուցել է նաեւ Սմբատ իշխանի տապանատունը Նորավանքում: Վանքի վրա աշխատած երկրորդ ճարտարապետին համարում ենք Գրիգորիկին, որի անունը փորագրված է մույթի խոյակի վրա:

Արատեսի վանքը հատուկ նշանակություն է ունեցել 13-րդ դարի վերջերին, պատմագիր Ստեփանոս Օրբելյանի եպիսկոպոսության ժամանակ: Հեղինակավոր, եռանդուն ու հարուստ պատմագիրն, իր գավազանի տակ համախմբելով Սյունյաց պառակտված թեմը, Վայոց Ձորի Նորավանքը դարձնում է իր նստավայրը: Նորավանքը գտնվում է մի անծուկ ձորի մեջ, ուր ամռանը հեղձուցիչ տապ է լինում: Իր միաբանների վիճակը թեթեւացնելու համար իշխանազուն եպիսկոպոսը որոշում է Արատեսի վանքը դարձնել եպիսկոպոսական ամառանոց, քանի որ այն գտնվում է բարձրանիստ եւ ընդարձակ հովտում, շրջապատված սառնորակ աղբյուրներով: Այդ նպատակի համար ոչ միայն բարեկարգվում է վանքը, այլեւ եպիսկոպոսն իր հայրենական կալվածներից նրան նվիրում է Գեղարքունիք գավառի 8 գյուղ: Երկրորդ արձանագրության համաձայն՝ Արատեսի վանքը հաստատվում է որպես Նորավանքի սեփականություն, եւ վերջինիս վրա է դրվում վանքի պայծառության եւ շենության հոգսը:

Արատեսի վանքի շրջապատում եղել է մեծ գերեզմանատուն, ուր այժմ մի քանի խաչքարեր ու տապանաքարեր են մնացել միայն: Իսկ գյուղի հարավում՝ ձորամիջին, լերկ եւ պատանման ժայռերի վրա քանդակված են բազմաթիվ խաչեր, որոնցից մի քանիսի տակ կան հիշատակություններ: Արատեսի վանքից եւ շրջապատից ժողովածուում ափոփել ենք 36 արձանագրություն, որոնցից ամենահինը գրվել է 967 թվականին, նորը՝ 1713 թվականին»,-գրում է Բարխուդարյանը:

Արատեսի վանքում 1303 թվականին գրիչ Խաչատուր Երզնկացին Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանի պատվերով ընդօրինակել է Գրիգոր Նյուսացու «Մեկնութիւն ժողովողին» աշխատությունը:

Վանքին 1073 թվականին ոմն Արտավազդ նվիրել է Եղեգիսի այգին եւ կալվածքներ: 1220 թվականին իշխան Վասակ Խաղբակյանը Արատեսի վանքի պատին արձանագրել է Վայոց Ձորի ամրոցների ազատագրման փաստը. « Ի ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ ԼԱՇԱՅԻՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՎԱՆԵ ԱԹԱԲԵԿԻՆ ԵՍ ՎԱՍԱԿ ՈՐԴԻ ԽԱՂԲԱԿԱ ԿՈՂՄՆԱՊԱՀ ԳԱՌՆՈՑ ՄԻՆՉԵՒ Ի ԲԱՐԳՈՒՇԱՏ ԵՏ ԱՌԻ ՁԱՄՐՈՑԱՆԻՍ ԵՂԵԳԵԱՑ ՁՈՐՈՅՍ ԱՒԳՆՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՅՈ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵՐ ՍԱՐԳԻՍ...»:

Վանքի պատերից մեկի վրա պահպանված արձանագրությունն էլ փաստում է Գեղարքունիք գավառի 8 գյուղերը Արատեսի վանքին նվիրելու մասին: «ԿԱՄԱՎ ԿԱՐՈՂ ՀԶՈՐԻՆ ԱՍՏՈՅՈ ԵՍ ՏԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՈՐԴԻ ՄԵԾ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ ԵՏՈՒ ՍՈՒՐԲ ՍԻՈՆԻՍ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՍ ՈՒ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՍ Ի ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՎԻՃԱԿԵՆԻ ԳԵՂԱՐՔՈՒՆՈՅ ՁԳԵՂՆ ՎԱՆԷՎԱՆ ՁԿԻՏԱՆՈՑՆ ՁՓԱՌԱԿՈՒՆԻՔ ՄՇՊԼԱՇԵՆ ՇԻԿԱՅԿԱՐԲՆ ԽՈՒԼԻՆԱԿՆ ՔՈԹԱՐԱՆՑ ԶԴԱՐՊԱՆՏՆ ՁԻ ՄԻ ՈՔ ԻՇԽԵՍՑԵ ԽԱՎԱՐԵԼ ԿԱՄ ԽԱՓԱՆԵԼ Ի ՄԵՐՈՑ ԿԱՄ ՕՏԱՐԱՑ ՁԻ ՄԻ ՊԱՏԻԺՍ ԿՐԵՍՑԵ»:

Այս արձանագրությամբ հրաշքով պահպանվել են Գեղարքունիք գավառի այն բնակավայրերի անունները, որոնք լքվել կամ ամայացել են դարեր առաջ, սակայն դրանց ավերակները պահպանվում են: Դրանք են՝ Փառականք, վանէվան, Կթանոց, Մշալաշեն, Շիկակարբն, Խուլինակն, Քոթարանց, ու Դարբանտ գյուղերը: Դժվար չէ եզրակացնել, որ այդ բնակավայրերը տեղաբաշխված են եղել Արատեսից դեպի հյուսիս ընկած լեռնաշղթայի հակառակ կողմում, ներկայիս Արծվանիստ, Ծովինար, Վարդենիկ գյուղերի վարչական տարածքներում: Մեր այցելության պահին այստեղ նկատեցինք նաեւ դպրոցականների, ովքեր իրենց ուսուցիչների հետ եկել էին Արատես՝ պատմության ու հայրենագիտության բաց դաս առնելու նպատակով:

Ուրախալի է, որ այսօր պետական հովանավորությամբ վերականգնվում կամ վերականգնման ծրագրերում ընդգրկվում են մեր ժողովրդի կերպարը պանծացնող բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ, ու հույս ունեմ, որ մի գեղեցիկ օր էլ իր պատմաճարտարապետական վեհաշուք տեսքի մեջ կտեսնենք Արատեսի վանքը:

Տուն ենք վերադառնում հոգով ու մտքով հարստացած, հայրենագիտության ու հայրենաճանաչողության մասին տպավորիչ, անմոռանալի դաս առած:

Իսկ Արատեսի վանքը կարծես ասում է համայն հայությանը՝ արի՛, տե՛ս իմ հրաշակերտ պատկերը նույնքան գեղատեսիլ բնության մեջ ու է՛լ ավելի հայացիր:

Խոսրով Խլղաթյան

11.qxd 30/05/2025 17:21 Page 5

ԾՈՎԱԿՈՒՄ ՀՈՂԵՐԻ ՋՐԱՐԲԻԱՑՄԱՆ ԽՈՇՈՐ ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ գյուղում հողերի ջրարբիացման եւ կլիմայի փոփոխության դիմակայության խոշոր ծրագիր է իրականացվում «Ցածր ածխածնային լուծումների ներդրում հողային եւ ջրային ռեսուրսների կայուն կառավարման համար Գեղարքունիքի մարզի Ծովակ բնակավայրում» ծրագրի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրեց ծրագիրն իրականացնող «ԲԼԵՋԱՆ» ՀԿ նախագահ Լիաննա Ասոյանը, ծրագրի մեկնարկը տրվել է 2022 թվականի դեկտեմբերին եւ ավարտի կհասցվի 2025 թվականի հունիսին: Ծրագիրը ֆինանսավորվում է «ՄԱՋԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի» շրջանակներում, 105 հազար 840 ԱՄՆ դոլար արժեքով, որից 50000 դոլարը ներդրվում է ծրագրի, 55840 դոլարը՝ համաֆինանսավորման կարգով, Վարդենիսի համայնքապետարանի եւ «Գեղարքունիք» ՋԾԸ կողմից:

Շուրջ երկու տարի է, ինչ ծրագիրը մեկնարկել է, որի ընթացքում հստակեցվել է Ծովակի պոմպակայանի սեփականության իրավունքի հարցը, եւ ՀՀ Կառավարության համապատասխան որոշմամբ ՀՀ սեփականություն հանդիսացող ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ գյուղի 4 հասցեի 83.1 քառ. մետր պոմպակայանը, 34.5 քառ. մետր պահակատունը, 59.6 քառ. մետր պարիսպը եւ 0.992 հա հողամասը ընդհանուր 7605131 դրամ անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, ամրացվել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեին եւ անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել է «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերությանը:

Պոմպակայանի տարածքում իրականացվել է 20 կիլովատտ հզորության արեւային կայանի տեղադրում եւ գործարկում, ձեռք են բերվել հզոր եւ էներգաարդյունավետ պոմպեր, որոնք պատրաստ են տեղադրման:

Վարդենիսի համայնքապետարանի կողմից՝ ՄԱԿ-Ի Պարենի Համաշխարհային ծրագրով, տրամադրվել է 4 կմ խողովակաշար, որը «Գեղարքունիք» ՋԾԸ ջանքերով մոնտաժվում, փոխարինվում եւ տեղադրվում է խորհրդային տարիներից մնացած խողովակների փոխարեն: Մեկնարկել է նաեւ ուսումնացուցադրական տարածքների կառուցման աշխատանքները: Ոռոգման համակարգը նախատեսվում է գործարկել 2025 թվականի հունիսի վերջին:

-Ծովակ գյուղում 645 հեկտար վարելահողերի շուրջ 70 տոկոսը չի ոռոգվում՝ ջրային ռեսուրսների անմատչելիության եւ ենթակառուցվածքների մաշվածության պատճառով: Արդյունքում՝ տարածքը անապատացվում է հողերի դեգրադացիայից, կերային խնդիրներից եւ եկամտաբերության կորստից՝ խորացնելով գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրները: Մեր Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել Ծովակ բնակավայրի դիմակայունությունը կլիմայի փոփոխությանը՝ վերագործարկելով ոռոգման ենթակառուցվածքը եւ ներդնելով կայուն հողօգտագործման ու ջրային ռեսուրսների կառավարման նոր գործելակերպեր: Ծրագրի գլխավոր բաղադրիչներն են՝ պոմպակայանի վերագործարկում՝ Մեծ Մասրիկ գետի ջրերով, 500 հա հողի ոռոգման նպատակով, արեւային էներգիայի օգտագործում՝ պոմպակայանի 20 կՎտ հզորությամբ լուսաէլեկտրական կայանի գործարկմամբ, ագրոտեխնոլոգիաների ցուցադրություն՝ բարձրարժեք մշակաբույսերի եւ նոր ոռոգման մեթոդների կիրառմամբ, կարողությունների զարգացում՝ ֆերմերների ու ՏԻՄ-երի վերապատրաստմամբ, տեղեկատվական արշավ՝ թերթիկների հրատարակմամբ, դասընթացների, խորհրդաժողովների կազմակերպմամբ: Ծրագրից ակնկալվող արդյունքներն են՝ 500 հա նոր ոռոգելի հողատարածք, ներդրված 4 կմ երկարության նոր ոռոգման խողովակաշար, պոմպակայան՝ նոր պոմպերով ու արեւային էներգիայով, ցուցադրական հողամասեր՝ նոր տեխնոլոգիաներով, նվազեցված հողերի դեգրադացիա, բարելավված եկամուտներ: Ի վերջո, ծրագրի իրականացման արդյունքում Ծովակում զարգացում կապրի գյուղատնտեսությունը՝ հողագործության ու անասնապահության ճյուղերով, կտեղծվեն կայուն եկամուտներ, տնտեսությունները կբարեկլավեն իրենց սոցիալական վիճակը: Նոր ոռոգման սեզոնի սկզբից ոռոգելի կդառնա 250 հեկտար հողատարածք, եթե ակոսային ոռոգմամբ իրականացվի այն, իսկ եթե անցում կատարենք ոռոգման արդիական համակարգերի, ապա ոռոգելի կդառնան 500 հեկտարից ավելի տարածք,-ներկայացրեց Լիաննա Ասոյանը:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՆՁԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՍԱՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ԵՆ ՆՎԱՃԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի մշակույթի տան սաները մրցանակների են արժանացել միջազգային մրցույթներում:

Գանձակի մշակույթի տան նարչության բաժնի վեց սաների աշխատանքներ ցուցադրվել են Բուենոս-Այրեսի Ազգային ժամանակակից թանգարանում: Աշխատանքների հեղինակները նաեւ «Յունիվեր Արտ» միջազգային մրցույթի մրցանակակիրներ են:

Ցուցադրությունները շարունակվելու են Արգենտինայի այլ քաղաքներում եւս, իսկ մասնակիցները ստանալու են մասնակցության վկայականներ:Ցուցահանդեսին աշխատանքներ են ներկայացրելՄիլենա Կարապետյանը, Դիանա Հովհաննիսյանը, Իգնատ Գաբրիելյանը, Աննա Սարիբեկյանը, Սամվել Ղարիբյանը եւ Օֆելյա Բարսեղյանը:

Մշակույթի տան տասնութ սաները մասնակցել են նաեւ «Արտ Մյուզիք» միջազգային փառատոնի եւ մրցանակների արժանացել «Նկարչություն» եւ «Դեկորատիվ կիրառական արվեստ» անվանակարգերում:Առաջին տեղի մրցանակի են արժանացել Օֆելյա Բարսեղյանը եւ Սյուզի Սարիբեկյանը, երկրորդ տեղ են գրավել Լեւոն Թաքոսյանը, Գայանե Յավրյանը եւ Մանե Մանուկյանը,երրորդ տեղ՝ Կարինա Գեւորգյանը, Աննա Բարսեղյանը, Ալիտա Մարգարյանը, Աննա Գասպարյանը, Անահիտ եւ Մերի Սարիբեկյանները, Հարությունյան եւ Սամվել Ղարիբյանները, Անգելինա Կարեյանը, Դիանա Հակոբյանը:

Դիպլոմակիրներ են դարձել Էլիզա Հարությունյանը, Սուսաննա Այվազյանը, Միլենա Կարապետյանը եւ Աննա Սարիբեկյանը:

Ալվարդ Մանուկյան

ԳԵՂԱՄԱՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԿԱՆԱՆՑ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Գեղամավան գյուղում «Դէկավվա» հիմնադրամի կողմից բացվել է կանանց կրթական կենտրոն:

Ընդամենը երկու ամիս առաջ Սեւան համայնքի Զովաբեր բնակավայրում ազդարարվել է «Դէկավվա» հիմնադրամի «Հարեհաս» կրթական ծրագրի մեկնարկը, իսկ երկու ամիս անց «Հարեհաս»-ն իր ոտնամուտն է տոնել Գեղամավան գյուղում:

Բացված կենտրոններում կանայք հնարավորություն ունեն կրթվել, փոխանակվել մտքերով, նախաձեռնություններ սկսել, ընկերանալ եւ իրար աջակցել տարբեր հարցերում: «Հարեհաս» ծրագիրը 6 տարվա ռազմավարությամբ զարգացնելու է Գեղարքունիքի մարզի 88 բնակավայրերը ու կրթելու է 3520 կանանց:

Ծրագրի արդյունքում ստեղծվելու են 40 կրթական կենտրոն, որոնցից երկուսն արդեն գործում են Սեւան համայնքում՝ Զովաբեր եւ Գեղամավան բնակավայրերում:

Ծրագրի ընթացքում 3520 կին կունենան անվճար կրթության հնարավորություն, այդ թվում՝ «Armenian Code Academy»-ում, իսկ մինչեւ 60 տոկոսը՝ նաեւ աշխատանք:

Արմինե Ղուկասյան

ՄԱՔԵՆԻՍՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մաքենիս գյուղում 2025 թվականի մարտ ամսից մեկնարկել եւ ընթանում են 280 տեղանոց կրթահամալիրի կառուցման աշխատանքները ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, «Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, Մաքենիսի կրթահամալիրի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 400 միլիոն դրամ: Կրթահամալիրը բաղկացած է լինելու 200 տեղանոց դպրոցից եւ 80 տեղանոց մանկապարտեզից: Արդի չափորոշիչներչին համապատասխան կրթահամալիրում կսովորեն Մաքենիսի եւ նրան մերձակա Ախպրածոր ու Լճավան գյուղերի նախադպրոցական ու դպրոցական տարիքի երեխաները:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2027 թվականի սեպտեմբերին:

Շինարարությունն իրականացնում է «Արմատ» ՍՊԸ-ն:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում ավարտական փուլում են գտնվում ասֆալտապատ փողոցների քանդված հատվածների փոսային նորոգման աշխատանքները:

Դրանք իրականացվել են Գավառ քաղաքում եւ համայնքի Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Ծաղկաշեն, Գանձակ, Կարմիրգյուղ, Նորատուս, Հայրավանք, Բերդկունք, Լճափ, Ծովազարդ բնակավայրերում:

Իրականացված աշխատանքների արդյունքում ասֆալտապատ փողոցների քանդված մասերը նորոգվել են շուրջ երեք հազար քառակուսի մետր մակերեսով:

Աշխատանքների պատվիրատուն Գավառի համայնքապետարանն է, կապալառուն՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն:

Ճանապարհների փոսային նորոգումների համար Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեից հատկացվել է 24 միլիոն 600 հազար դրամ:

11.qxd 30/05/2025 17:21 Page 6

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԵՄ «ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՇԱԲԱԹՎԱ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում մայիսի 10-ից մեկնարկել եւ ընթանում են ԵՄ «Կայուն էներգիայի շաբաթվա» միջոցառումները, որոնք անցկացվում են «Արդար եւ մրցունակ կանաչ անցման խթանում» կարգախոսով:

Մայիսի 14-ին Սեւանի բազմագործառութային պետական քոլեջում անցկացվել է ճանաչողական դաս՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների նորոգում, մոնտաժում եւ շահագործում» թեմայով:

Մայիսի 16-ին Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի ճեմասրահում կազմակերպվել է դեկորատիվ բույսերի եւ ծաղիկների ցուցահանդես՝ «Մաքուր միջավայր» խորագրով:

Մայիսի 16-ին Սեւանի կենտրոնական գրադարանում տեղի է ունեցել բնապահպանական թեմաներով վավերագրական ֆիլմերի դիտում, որին հաջորդել է քննարկում:

Մայիսի 17-ին կազմակերվել է հեծանվաարշավ Սեւան քաղաքից դեպի Գագարին բնակավայր:

Մայիսի 12-ից 30-ը ներառյալ հայտարարվել է նկարչական աշխատանքների մրցույթ՝ «Արդար եւ մրցունակ կանաչ անցման խթանում» խորագրով:

Մայիսի 15-ից հունիսի 5-ը ներառյալ հայտարարվել է կարճ տեսահոլովակների նկարահանման մրցույթ՝ «5 քայլ դեպի էներգախնայողություն» եւ «Իմ կանաչ քաղաքը» խորագրերով:

Մայիսի 15-ից հունիսի 1-ը ներառյալ հայտարարվել է լուսանկարչական աշխատանքների մրցույթ՝ «Կանաչ աշխարհ» խորագրով:

Մայիսի 20-ին Սեւանի «Հեքիաթ» մանկապարտեզում տեղի կունենա «Բնապահպան միջատները» թեմայով նախագծային աշխատանքի ներկայացում:

Նույն օրը Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի ճեմասրահում կազմակերպվելու է թղթի, պլաստիկի եւ կտորի վերամշակման արդյունքում ստեղծված իրերի ցուցադրություն:

Մայիսի 21-ին Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոցում կազմակերպվել է նկարչական աշխատանքների ցուցահանդես՝ «Իմ կանաչ, մաքուր մոլորակը» խորագրով:

Մայիսի 22-ին «Զարթոնք» մսուր-մանկապարտեզում տեղի է ունեցել «Մեր մաքուր մոլորակը» թեմայով էկոլոգիական պարապմունք:

Մայիսի 30-ին «Գալիք» մսուր-մանկապարտեզում տեղի կունենա սպորտլանդիա: Հունիսի 6-ին Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի դահլիճում ցուցադրվելու է «Փոքրիկ Իշխանը» էկոներկայացումը: Հունիսի 6-ին Սեւան համայնքի Դդմաշեն բնակավայրում, «Դդմաշենի վիքիակումբ» կրթական ծրագրի շրջանակներում, ստեղծվելու են թեմատիկ նյութեր «Ազատ բովանդակությամբ հոդվածների ստեղծում կայուն եւ վերականգնվող էներգիայի, էներգիայի արդյունավետ օգտագործում» թեմաներով: Հունիսի 7-ին Սեւան համայնքի Ծովագյուղ բնակավայրում կազմակերպվելու է էկոարշավ՝ բնակավայրում գործող երիտասարդական կենտրոնի այցելուների ներգրավմամբ: Հունիսի 10-ին Ծովագյուղ բնակավայրի «Երիտասարդական կենտրոնում» տեղի կունենա հանդիպում-քննարկում՝ «Նորարարական լուծումներ կանաչ անցման շրջանակներում» գաղափարների հավաքագրում թեմայով:.

Հունիսի 12-ին Սեւանի համայնքապետարանում կազմակերպվելու է «Կայուն էներգիայի շաբաթվա» եւ հայտարարված մրցույթների ամփոփում: Ինչպես տեսնում եք, միջոցառումները թեմատիկ են, հարուստ ու բազմաբովանդակ, որոնք ծառայելու են իրենց բուն նպատակին:

Արմինե Ղուկասյան

ՆՇՎԵԼ Է «ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ»

Թանգարանների միջազգային օրվա առթիվ մայիսի 17-ին եւ 18-ին Գեղարքունիքի Երկրագիտական թանգարանում եւ Մարտունու պատկերասրահում կազմակերպվել եւ անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ ցուցադրությունների, դպրոցականների մասնակցությամբ ներկայացված ծրագրերի իրականացմամբ:

Ծրագրերում ներառվել են «Բաց դռների օր» Գեղարքունիքի երկրագիտական թանգարանում, ցուցադրություն եւ վարպետաց դաս՝ «Խեցեգործություն» թեմայով, Գավառի գեղարվեստի դպրոցի հետ համագործակցությամբ, «Թանգարանների ապագան արագ փոփոխվող համայնքներում» թեմայով միջոցառումները:

Տեղի են ունեցել Ազգային-ազգագրական իրերի բացօթյա ցուցադրություններ, Ժամանակավոր ցուցադրություն՝ «Կենցաղային իրերի եւ տեխնիկայի էվոլուցիան» խորագրով:

Մարտունու արվեստի դպրոցի տիկնիկագործները ներկայացրել են իրենց աշխատանքները: Անցկացվել է «Հայ երաժշտություն, իմ ազգային հոգու կանչ» խորագրով միջոցառում՝ Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի աշակերտների մասնակցությամբ:

«Բաց դռների» միջոցով եւ «Թանգարանային գիշերե» համաեվրոպական միջոցառման շրջանակներում նշված մշակութային կառույցներն ունեցել են բազմաթիվ այցելուներ՝ հանրապետության մարզերից եւ տարբեր վայրերից:

Արփիկ Չքոլյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ԵՆ ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՆԳԱՌՆԵՐ

Մարտունի համայնքի բնակավայրերում կառուցվում են պատմամշակութային հուշարձանների լուսանկարային ցուցադրություն կրող երթուղային կանգառներ:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, կանգառները կառուցվում են ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Մարտունու երթուղային կանգառների կառուցման ծրագրի պայնագրային արժեքը կազմում է 160 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Մարտունի համայնքի պատմության եւ բնության հուշարձանների լուսանկարային պատկերներով 40 երթուղային կանգառների կառուցում համայնքի կազմում ընդգրկված 17 բնակավայրերում:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2024 թվականի օգոստոսից եւ ավարտի կհասցվեն 2025 թվականի հուլիսին:

2025 թվականի մայիսի 5-ի դրությամբ արդեն կառուցվել է 30 կանգառ: Կանգառներն ապահովված են լինելու գիշերային լուսավորության համակարգով: Դրանց շահագործումը մեծապես խթանելու է տուրիզմի աշխուժացումը:

«Գեղամա աշխարհ»

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանի եւ ՀՀ ՊՆ ՀԶԿ Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ Արմեն Մնացականյանի համատեղ նախաձեռնությամբ պարգեւատրվել են Վարդենիս համայնքից 2025 թվականի վարժական հավաքներին մասնակցած պահեստազորայինները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, համայնքապետարանում հրավիրված հանդիպման ժամանակ Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը եւ ՀՀ ՊՆ ՀԶԿ Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ Արմեն Մնացականյանը շնորհակալագրեր են հանձնել 2025 թվականի գարնանը կազմակերպած վարժական հավաքների մասնակիցներին:

Շնորհավորելով հավաքվածներին՝ համայնքի ղեկավարը շնորհակալություն է հայտնել վարժանքներին մասնակից պահեստազորայիններին ու հավաստիացրել, որ համայնքապետարանը մշտապես հայրենիքի պաշտպանների ու նրանց ընտանիքների անդամների կողքին է:

Գնդապետ Արմեն Մնացականյանը եւս շնորհակալություն է հայտնել զինծառայողներին՝ իրենց պարտքը հայրենիքի նկատմամբ պատվով ու պատասխանատվությամբ կատարելու համար եւ նշել, որ նրանք լավագույն օրինակ են վարժական հավաքների հաջորդ հերթափոխերի զորակոչվածների համար:

«Գեղամա աշխարհ»

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԵԿՆԱԾ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԸ

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը եւ Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ Արմեն Մնացականյանը պատվոգրեր են հանձնել Գավառ համայնքից 2025 թվականի մարտի 18-ից ապրիլի 11-ը կազմակերպված վարժական հավաքներին մասնակցած պահեստազորայիններին:

Պատվոգրերը Գավառ համայնքի պահեստազորայիններին հանձնվել են՝ վարժական հավաքներին ակտիվորեն ներգրավվելու, բարեխիղճ ծառայության եւ հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու համար:

Պարգեւատրումն ուղեկցվել է շնորհավորանքներով եւ շնորհակալական խոսքերով:

Ալվարդ Մանուկյան

11.qxd 30/05/2025 17:21 Page 7



Արտաշ Զոհրապի Ստեփանյան

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Նորեկներից ովքեր կարող էին աշխատել, տեղավորվեցին կոլտնտեսության արտադրության օղակներում, առանձնապես երկրագործության եւ անասնապահության բնագավառում: Գյուղի բնակիչների ութսունհինգ տոկոսը ռուսներ էին: Նրանց մարդամոտ ու մարդասեր վերաբերմունքը սպեղանու նման հանգստացնում էր աքսորվածների գրգռված նյարդերը, եւ նրանք կամաց-կամաց համակերպվում էին նոր բնակավայրին ու նոր միջավայրին:

Դունուշն ու Ռափոն կովկիթ էին, Եղոն դարձել էր կոլտնտեսության առաջավոր վարպետներից մեկը, Ռուբենին վստահվեց դաշտավարական բրիգադը, մյուսներն աշխատում էին տարբեր ճյուղերում: Ռանչպար աքսորականներն էլ իրենց հերթին գոհացնում էին տեղի մարդկանց: Նրանց աշխատասիրությունը, նիստուկացը, մարդկային լավագույն գծերը տեղացիների աչքից չէր վրիպում: Այնպես որ խուփը գլորվել ու գտել էր պուտուկին:

Աքսորականների մի խումբ էլ, այդ թվում նորածին Հույսի հայրն ու մայրը իրենց ընտանիքով բնակեցվել էին Ալթայի երկրամասի Կուլունդա լճի ափին գտնվող գյուղերից մեկում:

Տարբեր գյուղերում բնակեցված հայերը այցելում էին միմյանց, հետաքրքրվում իրար վիճակով ու ապրելակերպով: Նրանց շատ էր հետաքրքրում Հույսի առողջությունը: Այդ սիմվոլիկ անունը ինչ-որ լավ բան էր ներշնչում եւ մարդկանց լցնում լավատեսությամբ: Այցելուները հաղորդում էին, որ Հույսը առողջ է եւ լավ էլ աճում է, փարթամ է ու թմբլիկ:

Նորաբնակները կամաց-կամաց կարգավորում էին իրենց տրված նեղլիկ բնակարանները: Թոնրի պակասությունն իրեն զգալ էր տալիս, չնայած ռուսական վառարանը կատարում էր իր դերը: Որոշ ժամանակ հետո Եղոն հողից պատրաստեց, չորացրեց, տեղադրեց ու թրծեց ալաշկերտյան տիպի թոնիրը, որի ջերմությունն ու եփելու հնարավորությունները գնահատվեցին նաեւ տեղացիների կողմից: Բանը այնտեղ հասավ, որ կրիժանովցիներից շատերը Եղոյին պատրաստել տվեցին հայկական թոնիրը եւ տեղադրեցին իրենց տներում:Թոնիրներում թխվող լավաշ հացն ու նրա բուրմունքը եւս լավ ընդունելություն գտան:

Դունուշն ու Ռափոն էլ իրենց թոնիրն ունեցան: Նրանք շինեցին նաեւ հողե տաշտ, որպեսզի խմորը նրա մեջ հունցեն: Հողե տաշտի մեջ էին պահում նաեւ լավաշ հացը, որը այնտեղ փափուկ ու թարմ էր մնում:

Չնայած ապրելու եւ աշխատելու պայմաններն այնքան էլ վատ չէին, այնուամենայնիվ, ախն ու վախը անպակաս էին աքսորականներից: Նրանք կարոտով էին հիշում հայրենի գյուղը, իրենց մրոտ օճորքներով տները, հարազատների գերեզմանները եւ ամենից շատ՝ կապույտ Սեւանն ու Արմաղան լեռը: Դունուշը հաճախ դնդնում էր իր պապ Ալամշանի սիրած երգերից ու մտքում սլանում հարազատների գիրկը:

Այն կոլտնտեսությունը, ուր իրենք աշխատում էին, ուներ ցորենի ընդարձակ արտեր եւ լավ արոտավայրեր: Անասնապահության եւ դաշտավարության բնագավառում աշխատում էին նաեւ աքսորականները եւ աչքի էին ընկնում իրենց բարեխիղճ աշխատանքով: Ժողովներում միշտ էլ գովեստով էին խոսում բրիգադիր Ռուբենի, վարպետ Եղոյի, կթվորներ Դունուշի ու Ռափոյի, ինչպես նաեւ ուրիշների մասին: Այնպես որ, նրանց արժանապատվության զգացումը նոր բնակավայրում եւս գործում էր ակտիվ ու ազնվորեն:

Նրանք աքսորման հենց առաջին տարում ցորենի լավ բերք ստացան, ունեին նաեւ յուղ ու պանիր, ապրուստի որոշ միջոցներ եւ չէին դժգոհում իրենց ապրելակերպից: Սակայն, ինչպես ասում են, նրանց տանջում էր հայրենիքի կարոտը:

Աքսորականների ծննդավայրում, նրանց հայրենի գյուղում, որտեղից նրանց աքսորել էին, կատարվում էր մի տհաճ իրողություն. Կոլտնտեսության վարչության նախագահի միանձնյա որոշմամբ ու կարգադրությամբ քանդում էին աքսորվածների խղճուկ տները եւ քարն ու փայտը տեղափոխում կոլտնտեսության համար կովանոց ու հորթանոց կառուցելու նպատակով: Գյուղացիները տհաճությամբ էին ընդունում այդ երեւույթը եւ հաճախ գաղտնի փսփսում. «Մարդկանց աքսորելն ավելի հեշտ բան է, քան նրանց տները քանդելը»: Իրոք, դա տնաքանդություն էր:

Կոլվարչության նախագահը տնամերձ հողոմասի պահանջ ներկայացնող կոլտնտեսականներին առաջարկում էր աքսորվածների տնամերձ հողերը: Շատ շատերը հրաժարվում էին այդ հողերից՝ պատճառաբանելով, որ դրանք տեր ունեն եւ ամբարտավանություն կլինի՝ աքսորվածների տնամերձերին տիրանալը: Դունուշի հողը ամրացրել էին մի երիտասարդ ընտանիքի, որի անդամները նոր էին բաժանվել ծնողներից եւ նոր ծուխ կազմել: Գյուղխորհրդից տպագրված ու ծրարված գրությամբ հայտնել էին ծխատիրոջը, որ Դունուշ Զաքարյանի տնամերձը տրված է նրան: Այդ գրությունն ուրախություն էր պատճառում երիտասարդ ընտանիքի անդամներին, քանի որ Դունուշի տնամերձը բավականին բերրի հողակտոր էր եւ հարմարավետ էր՝ նոր բնակարան կառուցելու համար: Նրանք, առանց իրենց ծնողներին տեղյակ պահելու, սկսեցին ավտոմեքենայով քար տեղափոխել եւ լցնել Դունուշի տնամերձը: Երկու-երեք ավտոմեքենա քար լցնելուց հետո նորապսակների՝ Դունուշի հողին տիրանալն ու այնտեղ քար լցնելը հայտնի դարձավ նրանց ծնողներին, որոնք իրենց զավակների արարքը համարեցին անմարդկային եւ արգելեցին նրանց տիրանալ այդ հողին ու պահանջեցին հրաժարվել այդ հողամասից ու այնտեղ բնակարան կառուցելու մտքից:

-Դուք, որ աքսորականի հողին տեր դառնաք ու նրա մեջ օջախ հիմնեք,- ասում էին նրանք,- էլ ի՞նչ երեսով պետք է նայեք մարդկանց: Ամոթ է, ամոթ, ձեզ հետ միասին մեզ էլ եք խայտառակում:

-Նոր հավ են դարձել,- զայրացած ասում էր տղայի հայրը,- երկաթե ձվեր են ածում: Շու՜տ դեն գցեք այդ հողը: Իսկ եթե Դունուշի հողին տեր դառնաք, իմ տունը չմտնեք, ինձ պետք չեն այդպիսի հարս ու տղա:

Երիտասարդները ստիպված եղան քարերը հանել Դունուշի հողից ու հրաժարվել նրանից:

***

Սիբիրյան առատ ձյունը իր սառը շնչով շեղջվել էր Կրիժանովկայի բակերում ու կտուրներին: Սառնամանիքից դզզում էին փայտե սյուների վրա ձգված երկաթե լարերը: Շները քայլելիս խրվում էին առատ ձյան շերտի մեջ եւ դնչները դուրս ցցում: Նրանց շարժումները հաճախ նմանվում էին լողալու, հաճախ էլ խրված տեղից ցատկելով ընկնում ու խրվում էին մի քայլ առաջ, խրվում փափուկ ձյան հաստ շերտի մեջ: Իսկ երբ սկսվում էր մոլեգնող քամին, եւ ձնաբուքը մթնեցնում էր դուրսը, ամեն կենդանի արարած թաքնվում էր՝ նրա սրասափելի բերանը չընկնելու համար:

Այդպիսի ահավոր բքին ու ցրտին էր, երբ Դունուշին հայտնեցին, որ իրեն ու Ռափոյին կանչել են Պակրովկայի գյուղսովետ, որտեղից նրանց կընդունեն եւ հարցափորձ կանեն Մոսկվայից եկած մարդիկ: Այդ լուրը ավելի շատ տխրեցրեց նրան, քան ուրախացրեց: Մնացած աքսորականները եւս իմացան այդ մասին եւ նրանք էլ իրենց հերթին սկսեցին վախենալ:

-Չլինի՞ թե այստեղից էլ են ուզում աքսորել,- մտածում էին նրանք:

-Մի վատ բան կա,- փսփսում էին միմյանց,- թե չէ Մոսկվայից եկած մարդիկ ի՞նչ գործ ունեն մեզ հետ:

Դունուշի եւ Ռափոյի մտքով անցնում էր, որ իրենց կանչել են Տիգրանի հաշվով եւ որոշել էին պնդել, որ Տիգրանն անմեղ գեղջուկ է, որ նրան անտեղի են բանտարկել: Նրանք միաժամանակ մտածում էին, որ առիթից օգտվելով կարող էին իմանալ նաեւ Տիգրանի կենդանի եւ մեռած լինելու մասին: Դունուշը մտածում էր պատրաստ լինել այն բանին, որ եթե հանկարծ իրենց մեղադրեին Տիգրանի հաշվով, ապա ինքն էլ կվկայակոչի հայրենիքի համար իր տղաների զոհվելը, մի փաստ, որ բզի պես կարող էր խրել իրենց մեղադրողների աչքերը:

-Եթե ինձ մեղադրեն Տիգրանի կինը լինելու համար,- ասում էր Դունուշը,- ես նրանց կասեմ, որ Տիգրանը երկու տղա է մատաղ արել իր հայրենիքին, իսկ դուք ի՞նչ եք տվել ձեր հայրենիքին: Կասեմ, որ Տիգրանը իսկական հայրենասեր եւ իր քրտինքով ապրող մարդ էր: Կասեմ նաեւ, որ կասկածելի մարդ դուք եք: Կասեմ՝ արե՜ք, ինձ սպանե՜ք, վերջանա-գնա:

Այս խորհրդածությունները տեւեցին մինչեւ բքերի հանդարտվելը եւ երթեւեկության ճանապարհների բացվելը: Երբ Դունուշն ու Ռափոն ուղեւորվեցին դեպի Պակրովկա, Դունուշն իր հետ վերցրել էր Հայկի եւ Միշայի նկարները, ռազմաճակատից ստացված նրանց հայրենաշունչ նամակները, որոնք միասին փաթաթված ու դրված էին Դունուշի կրծքին, անմիջապես կրծկալի տակ: Պակրովկայի գյուղսովետի անհրապույր շենքում նրանց ընդունեցին Մոսկվայից եկածները՝ բարի դեմքով, բարձրահասակ մի տղամարդ եւ նույնքան բարի ու հաճելի հայացքով, հիսունին մոտիկ մի կին: Նախքան գյուղսովետի նախագահի կաբինետ մտնելը, որտեղ նստած էին Մոսկվայից եկածները, Դունուշն ու Ռափոն նկատեցին, որ նրանց մոտից դուրս եկան Հույսի ծնողները՝ ուրախ տրամադրությամբ: Հույսի ծնողներին ուղեկցում էին զինվորական երկու տղաներ, որոնց շարժուձեւից երեւում էր աքսորական այդ ծնողների նկատմամբ հոգատարություն եւ օգնություն ցույց տալու տրամադրությունը:Նրանք սիրալիր կերպով փայփայում էին Հույսի ծնողներին եւ ուղեկցում՝ մոտակա տեղից ճանապարհ գցելու համար:

Ներսում Մոսկվայից եկածները ժպտալով ու հարգալից կերպով ընդունեցին Դունուշին ու Ռափոյին, սիրալիր սեղմեցին նրանց ձեռքերը եւ նստեցրին իրենց դիմաց կիսափափուկ աթոռների վրա: Սեղանի վրա փռված էին Դունուշի եւ Ռափոյի բնութագրերը, որոնք գրված էին առանձին-առանձին թերթիկների վրա: Բնութագրերը կնքված էին եւ կրում էին Կրիժանովկա ու Պակրովկա գյուղերի ղեկավարների ստորագրությունները: Բնութագրերի մեջ երեւում էին կարմիր մատիտով ընդգծված տողեր: Դրանք այն տողերն էին, որոնցով ցույց էին տրված մոր ու աղջկա աշխատասիրությունն ու բարեխղճությունը:

Մոսկվայից եկածները հանգամանորեն հետաքրքրվեցին Դունուշի ու Ռափոյի կյանքով, նրանց պատմել տվեցին կենսագրությունները, իմացան Հայկի, Միշայի մասին, տեսան նրանց դիմանկարները, հետաքրքրվեցին Տիգրանի բանտարկությամբ: Զրույցի ընթացքում նկատվում էր Մոսկվայից եկածների ցավակից վերաբերմունքը եւ արդարամիտ գործողությունը: Նրանք թարգմանչի միջոցով գրի էին առնում թշվառների պատմածները եւ հաճած մտքում նզովում ինչ-որ մեկի: Զրույցը տեղի ունցավ եւ ավարտվեց, ինչպես ասում են, բարեկամական մթնոլորտում: Դունուշն ու Ռափոն ուրիշ անգամ շատ էին հանդիպել պետական պաշտոնյաների եւ տեսել նրանց վերաբերմունքը: Այս հանդիպումը, սակայն, բոլորովին ուրիշ տպավորություն թողեց նրանց վրա: Եթե նախորդ հանդիպումների ժամանակ նրանք հարկադրված արցունք թափելով էին բաժանվում պաշտոնյաներից, ապա այս անգամ նրանք ժպտալով, ծիծաղելով բաժանվեցին Մոսկավայից եկածներից: Բաժանվեցին այնպես, ինչպես բաժանվում են հարազատից ու բարեկամից:

Պարկովկայից Կրիժանովկա վերադարձան հաջորդ օրը: Գյուղում եղած աքսորական ընկերները անհամբեր սպասում էին Դունուշի եւ Ռափոյի վերադարձին: Երբ վերջիններս հասան Կրիժանովկա, աքսորականները իսկույն հավաքվեցին նրանց մոտ եւ իմացան Մոսկվայից եկածների վերաբերմունքի մասին: Նրանք շատ ուրախացան, երբ լսեցին, որ Մոսկվայից եկած տղամարդն ասել է. «Ոչինչ, շուտով ամեն ինչ լավ կլինի»:

Մի քանի օր հետո Կրիժանովկա եկան երեք հոգի, երեք բարձրահասակ ու կիրթ տղամարդ: Նրանցից մեկը Պակրովկայի գյուղսովետում Դունուշին եւ Ռափոյին հանդիպած մարդն էր, որին անվանում էին Ալեքսեյ Անդրեեւիչ: Նա ՍՍՀՄ դատախազության պատասխանատու աշխատող էր եւ հատուկ հանձնարարությամբ զբաղվում էր աքսորվածների հարցով: Կրիժանովկա եւ մյուս գյուղերը գնալու համար նրան ուղեկցում էին Ալթայի երկրամասի դատախազության աշխատողները: Նրանք եղել էին այն բոլոր գյուղերը, որ վերաբնակեցված էին աքսորվածներ: Ալեքսեյ Անդրեեւիչն ու մյուսները հանդիպեցին ու զրուցեցին Ռուբենի, Հայկարամի, Զարուհու, Բալասի Սարոյի, Ստեփանի, Եղոյի եւ մյուսների հետ: Ալեքսեյը Դունուշին եւ Ռափոյին հանդիպեց որպես հին ծանոթների եւ ջերմորեն բարեւեց նրանց: Աքսորականների մասին նրանք գիտեին Կրիժանովկայի ղեկավարների եւ բնակիչների կարծիքները: Բոլորն էլ նրանց գնահատում էին որպես ազնիվ, բարի եւ աշխատասեր մարդիկ, մարդիկ, որոնք սիրում են ապրել արդար քրտինքով ու վաստակով:

Ուսումնասիրություններ կատարելուց հետո Ալեքսեյը հայտարարեց, որ իրենք կատարում են կառավարության հանձնարարությունը եւ պատրաստ են կառավարությանը զեկուցելու, որ այդ մարդիկ անմեղ են: Նա միաժամանակ հայտարարեց, որ այդ ամոթալի երեւույթը կատարվել է ժողովրդի թշնամի Բերիայի բանսարկությունների հետեւանքով:

-Ինձ հանձնարարված է,- վերջում ասաց Ալեքսեյը,- ձեզ հայտարարելու, որ կառավարությունը համոզված է ձեր եւ շատ-շատերի անմեղության մեջ ու շուտով որոշում կընդունի արդարացնելու եւ հայրենիք վերադարձնելու վերաբերյալ:

***

Հայրենիք վերադառնալու լուրը ցնցեց Ալթայի երկրամասի գյուղերում աքսորված հայերին: Կառավարության որոշման մեջ նշված էր, որ նրանք զրպարտված են ու անմեղ: Արձանագրված էր նաեւ, որ ժողովրդի թշնամի Բերիան, ժամանակին խցկվելով պետական բարձրագույն պոստում, օգտվելով իր պաշտոնական դիրքից, երկրում բազմաթիվ անմեղ մարդկանց աքսորել ու բանտարկել էր տվել՝ նրանց պիտակավորելով որպես հայրենիքի թշնամիներ: Կառավարությունն այդ բոլորին արդարացրել էր ու ազատել տաժանակրությունից: Հետագայում պարզվեց, որ հետմահու արդարացել էին նաեւ Տիգրանն ու իր հազարավոր ընկերները:

Վերջապես եկան հայրենիք վերադառնալու օրերը: Այն կոլտնտեսությունները, որտեղ բնակվում եւ աշխատում էին աքսորականները, կառավարության ցուցումով նրանց բոլոր տեսակի հասույթների՝ ցորենի, կարտոֆիլի, կաթնամթերքի եւ անասունների դիմաց, ինչպես նաեւ անշարժ գույքի փոխարեն վճարեցին կանխիկ դրամ, ապահովեցին ճանապարհի պաշարով եւ տրամադրեցին ավտոմեքենաներ ու այլ փոխադրամիջոցներ, որպեսզի տեղափոխվեն մոտիկ կառամատույցները, երկաթուղային կայանները:

Ովքեր ներկա եղան աքսորականների եւ տեղի բնակիչների բաժանմանը, նրանք ականատես եղան մի անմոռանալի տեսարանի: Իրար սովորած ու հասկացած մարդիկ բաժանվում էին մեծ դժվարությամբ: Տղամարդիկ, կանայք, երեխաներ բաժանվում էին համբույրներով, լացով ու կարոտով: Թվում էր, ոչ թե տարբեր ազգերի ներկայացուցիչներ են բաժանվում իրարից, այլ բաժանվում են միեւնույն ծնողների հարազատ զավակները: Տեղացիները օրհնանքով բարեմաղթություններ էին անում եւ ցանկանում էին, որ աքսորականները առանց փորձանքի հասնեն իրենց տները: Շատ-շատերը աքսորականներին ուղեկցում էին մինչեւ Սլավգորոդ քաղաքը, մինչեւ երկաթուղու կայարանը:

Մի շաբաթ էր, գնացքները իրար հետեւից շարժվում էին դեպի Հայաստան: Աքսորման օրերին գնացքում կամ այլուր հանդիպած մարդկանցից շատերը մեկ անգամ եւս հանդիպեցին վերադարձի ճանապարհին՝ գնացքի մեջ: Նրանք ամենից շատ հետաքրքրվում էին Հույսի կյանքով ու առողջությամբ: Հույսն արդեն յոթ տարեկան տղա էր: Աշխույժ էր ու արագաշարժ, երեւում էր, որ իր մեջ մարմնավորում է զորացող ուժ: Չնայած դեմքի դեղնությունը հուշում էր ինչ-որ ընկճվածություն, բայց նրա էության մեջ երեւում էր առնական տղամարդ դառնալու շանսը: Շատերը նրա գեղեցիկ բոյբուսաթը տեսնելիս ուրախանում էին, գրկում ու համբուրում նրան՝ հիշելով նրա ծնվելու եւ անվանակոչման հետ կապված իրենց խոհերն ու երազանքները: Շատերը լավ գիտեին նեւ Դունուշի պատմությունը եւ ուշադրությամբ նայում էին նրա դեմքին: Դեմք, որ դարեր շարունակ շոգից ու ցրտից, թաց ու չոր գործոններից, փոթորիկներից ու հողմահարումից ճաքճքված ժայռի նման էր: Նրան մխիթարում էր միայն այն հույսը, որ հայրենի գյուղում կթաղվի հայրական գերեզմանոցում, իր որդու կողքին:

Տխուր էին Հայկարամ Սարգսյանն ու Զարուհին: Նրանց մտքից չէր հեռանում փոքրիկ Եղիշի գերեզմանը, որ մնաց աքսորավայրում: Զարուհին լացակումած մրմնջում էր.

Սյունյաց աշխարհից աքսորված ծագուկ,
Քո տառապանքը ինչպե՞ս մոռանամ...
Իմ նուրբ ու նախշուն, անուշիկ գառնուկ,
Պանդուխտ շիրինդ ինչպե՞ս մոռանամ...

Արտաշ Ստեփանյան

11.qxd 30/05/2025 17:21 Page 8

ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐՇԱՎ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների շրջանակներում «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի կողմից այս տարվա ապրիլ-մայիս ամիսներին իրականացվել է երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավ:

Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի համակարգող Սոնա Խաչիկյանի տեղեկացմամբ՝ Հայկական Կարիտասի «Փոքրիկ Իշխան»-ը Գեղարքունիքի մարզում երեխաների պաշտպանության ոլորտում հանդիսանում է միակ ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնը, որը համաֆինանսավորվում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից եւ «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում 2024 - 2025 թվականների ընթացում պարբերաբար իրականացնում է արշավ՝ ուղղված երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Այս տարվա ապրիլ-մայիս ամիսների ընթացքում Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի կողմից իրականացվող արշավն ուղեկցվել է տարաբնույթ տեղեկատվական ակցիաներով եւ միջոցառումներով: Արշավի պլանավորման եւ գործողությունների մշակման փուլին ներգրավվել են նաեւ կենտրոնի սաները՝ հանդես գալով իրենց առաջարկներով:

-Երեխայի իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավը ընթացել է երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի չորս հիմնաքարային սկզբունքների հիման վրա՝ առանց խտրականության, երեխայի լավագույն շահ, կյանքի ու զարգացման իրավունք, մասնակցության իրավունք: Հիմնվելով այս հիմնաքարային սկզբունքների վրա՝ կենտրոնի մասնագիտական թիմի կողմից իրականացվել են ինտերակտիվ վարժանքներ, խմբային ու տեղեկատվական հանդիպումներ ծրագրի շահառու երեխաների եւ նրանց ծնողների համար: Այս հանդիպումների արդյունքում շահառու երեխաները եւ ծնողները իրազեկվել են ՄԱԿ-ի կողմից ընդունված երեխաների իրավունքների մասին կոնվենցիային: Կենտրոնի սաները Արտթերապիայի միջոցով պաստառների վրա պատկերել են իրենց իրավունքները՝ իրենց աչքերով: Սա նպաստել է երեխաների շրջանում իրենց իրավունքների վերաբերյալ գիտելիքների ամրապնդմանը: Վերոնշյալ արշավի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել նաեւ ոլորտային մասնագետների հետ,- նշեց Սոնա Խաչիկյանը:

Այս տարվա մայիսի 15-ին կենտրոնում նշվել է Ընտանիքի միջազգային օրը: Տոնի արթիվ կենտրոնում հյուրընկալվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման ղեկավար Անի Հովեյանը, ով ծրագրի շահառու ծնողների ու երեխաների հետ հանդիպման ընթացքում խոսել է հոգեկան առողջության, մտավոր եւ տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների, փախստական եւ ապաստան հայցող երեխաների, արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ: Հանդիպման ընթացքում բանախոսը ներկայացրել է նաեւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների շրջանակը եւ Պաշտպանին դիմելու եղանակները, սաներն ու ծնողները բարձրացրել իրենց հուզող հարցերը:

ՀՀ ՄԻՊ ՀՀ աշխատակազմի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման ղեկավարի հետ հանդիպմանը զուգընթաց միջոցառմանը մասնակից մասնակից երեխաներն ու իրենց ընտանիքի անդամները պատրաստել ու գունազարդել են մեծ պաստառ՝ «Ընտանիքում եւ համայնքում ապրելու իմ իրավունքը» թեմայով:

Իսկ մայիսի 20-ին կենտրոնում հյուրընկալվել են ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ Գավառի բաժնի ոստիկանության ներկայացուցիչ մասնագետները եւ կենտրոնի սաների հետ հանդիպման ընթացքում անդրադարձել երեխաների իրավունքների պաշտպանությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր եւ տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների, փախստական եւ ապաստան հայցող երեխաների, արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությանը:

Երեխաները հանդիպման ավարտին լրացրել են «Երեխայի Իրավունքներ» թեմայով բառախաղը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների շրջանակներում երեխայի իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված արշավին ներգրավվել են կենտրոնի 65 շահառու երեխաներ, 40 ծնողներ:

2024-2025 թվականների ընթացքում վերոնշյալ միջոցումներն իրականացնելիս կենտրոնի բազմամասնագիտական թիմը կիրառել եւ օգտվել է համագործակից կառույցների կողմից տրամադրած մասնագիտական նյութերից ու խորհրդատվությունից:

«Գեղամա աշխարհ»

ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՄԵՐԳ՝ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոցում տեղի է ունեցել 2024-2025 ուսումնական տարվա հաշվետու համերգը, որն իր մեջ ներառում էր երաժշտական դպրոցի ողջ տարվա ընթացքում կատարված քրտնաջան աշխատանքը:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, հաշվետու համերգին ներկա են եղել Վարդենիսի համայնքապետարանի ղեկավար կազմը եւ աշխատակազմի ներկայացուցիչներ:

Համերգային ծրագիրը մեկնարկել է երաժշտական դպրոցի երգչախմբի (Գեղարվեստական ղեկավար՝ Գայանե Դավթյան, խմբավար՝ Էմմա Խաչատրյան) ելույթով:

Այնուհետ դաշնամուրային, լարային, փողային նվագարանների բաժինների աշակերտները ներկայացել են իրենց երաժշտական կատարումներով:

Հաշվետու համերգն ավարտվել է դպրոցի ժողովրդական գործիքների նվագախմբի (Գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ Փառանձեմ Երանոսյան) գեղեցիկ կատարումով:

-Սրտանց շնորհավորում եմ Վարդենիսի թիվ 1 մանկական երաժշտական դպրոցի սաներին եւ ուսուցչական կազմին: Մեկ տարվա ձեր քրտնաջան աշխատանքի արդյունքն այսօր բոլորս տեսանք: Մեծագույն հաճույքով վայելեցինք բոլոր կատարումները: Ձեր աշխատանքը բարձր ենք գնահատում,- նշել է Վարդենիս համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Բարսեղյանը:

Վարդենիսի թիվ 1 մանկական երաժշտական դպրոցի տնօրեն Աիդա Սաղաթելյանը փաստել է, որ դպրոցի ուսուցչական կազմի առաջնահերթ նպատակն է՝ անել հնարավորը, որպեսզի սաները ստանան որակյալ եւ գրագետ կրթություն:

ԲԱՐԵԼԱՎՎԵԼ ԵՆ ԳԱՆՁԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գավառի համայնքապետարանի կողմից հատկացված դրամաշնորհների հաշվին բարելավվել են Գանձակ գյուղի երաժշտական դպրոցի աշխատանքային պայմանները:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, համայնքապետարանը 2024 թվականի բյուջեից ֆինանսական միջոցներ է տրամադրել՝ դպրոցի առկա կարիքներն ու խնդիրները որոշակիորեն լուծելու նպատակով: Կապիտալ դրամաշնորհով հատկացվել է 700 հազար դրամ, որով ձեռք է բերվել պարասրահի համար զգեստապահարան, դաշնամուր եւ գրասենյակային աթոռ: 1 միլիոն դրամ ընթացիկ դրամաշնորհն էլ ծախսվել է երգչախմբի հագուստ, մրցանակների ցուցատախտակ, նկարների ու պատվոգրերի շրջանակներ ձեռք բերելու վրա: 400 հազար դրամ էլ հատուկ նպատակային հատկացում է կատարվել:

Դպրոցում 2024 թվականին կատարվել են նաեւ շինարարական աշխատանքներ. համայնքի բյուջեի միջոցներով մեկ դասասենյակը վերակառուցվել է երկուսի, վերանորոգվել ու կահավորվել է: Այս նպատակով համայնքի 2024 թվականի բյուջեից 1 միլիոն 920 հազար դրամ է հատկացվել: Ավելացրել են ջեռուցման մարտկոցները, ջեռուցման համակարգի համար պահարան է կառուցվել:

2025 թվականի բյուջեի միջոցներով էլ վերանորոգվել է երաժշտական դպրոցի պարասրահի հատակը. նախկին փայտե հատակը փոխարինվել է վինիլայինով: Աշխատանքների համար ծախսվել է 1 միլիոն 950 հազար դրամ:

Գանձակի երաժշտական դպրոցին 2025 թվականին կապիտալ եւ ընթացիկ դրամաշնորհներ են տրամադրվել՝ պարարվեստի բաժնի սաների համար զգեստներ գնելու նպատակով: Ապրանքների ձեռքբերումն արդեն ընթացքի մեջ է:

Ալվարդ Մանուկյան

ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՍԵՎԱՆԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Այս տարվա ապրիլից սկսվել եւ ընթանում են Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի տրանսպորտային հանգույցի հիմնանորոգման երկրորդ փուլի աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Սեւանի տրանսպորտային հանգույցի հիմնանորոգման առաջին փուլն իրականացվել էր 2024 թվականին: Երթեւեկության մեծ ինտենսիվություն ունեցող կամուրջը տասնամյակներ շարունակ չէր նորոգվել, եւ կամրջի կոնստրուկցիաները սկսել էին քայքայվել: Անցած տարի պետական միջոցներով հիմնանորոգվել էր մոտ 30 մետր երկարությամբ կամրջի երթեւեկության մի ուղղությունը՝ 16.76 մետր լայնությամբ: Իսկ այս տարի հիմնանորոգվում է կամրջի երկրորդ՝ Սեւանից դեպի Երեւան ուղղությունը՝ դարձյալ 16.76 մետր լայնությամբ: Կամրջի վրա նորոգվելու են միացման կարերը, կատարվելու է երկշերտ ջրամեկուսացում, բետոնապատում, տեղադրվելու է երկշերտ ասֆալտբետոնե ծածկ: Նախատեսված է մայթերի կառուցում եւ բազրիքների տեղադրում, այլ աշխատանքներ:

Հիմնանորոգումն իրականացվում է պետական բյուջեի միջոցներով, 107 միլիոն 125 հազար դրամ արժեքով: Շինարարությունը նախատեսված է ավարտել այս տարվա ընթացքում:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 30. 05. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: